

# ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՅԵԼՈՒ ՄԵԶ

Վերակառուցման, դեմոկրա-  
տիայի ու հրապարակայնու-  
թյան կարգախոսներն ստեղծե-  
ցին այն քարերեր հողը, որի  
վրա ծլարձակեց ու հասակ  
նետեց արցախյան շարժումը:  
Ազգային-ազատագրական այդ  
պայքարի առաջատար շարժիչ  
ուժը ողջ հայ ժողովուրդն է,  
որն անցած տարիուկեսվա-  
րներացքում լործվեց ու առնա-  
կանացավ, ձեռք բերեց քա-  
ղաքական պայքարի մեծ փորձ  
ու հմտություն: Հարված, պայ-  
քուցիկ մթնոլորտում, քառա-  
ցիորեն օրեցօր փոփոխվող ի-  
րադրության մեջ, երբ շարժու-  
մը փորձում էին խեղդաման  
անել՝ աջից ու ձախից անխա-  
նարկածներ տեղալով, ժողո-  
վուրդը հավատաց միահամուռ  
կամքի հաղթանակին և շրո-  
ղեց, որ թոշնի արցախյան  
զարթոնների ծաղիկը: Ո՞չ հետա-  
դիմական որոշումների ու կարծ-  
րացած ավանդույթների հնո-  
տիքը դրոշի պես ծածա-  
նողների ճամոլ միոցը, ո՞չ  
լրատվության կենտրոնական  
միջոցների ահասարսուն պի-  
տակները, ո՞չ էլ, մանավանդ,  
ինքնապահովության բոժոժի  
մեջ տասնամյակներով բուն-  
դրած քաղքենիսկան միտու-  
ները դույզն-ինչ չխոտորեցին  
նրա ճանապարհը դեպի Վերջ-  
նական նպատակ: Ստույգ ու  
հեռատեսորեն լրացնվեց  
թերևս, ամենակարևորը՝ գոր-  
քաշույսան ապրիլը, որը, որ-  
քան էլ հուսավառ ու հեղափո-  
խական, յուրաքանչյուր կոնկ-  
րետ ժողովրդի համար լոկ-  
առաջընթացի ընդհանրական  
դրույթներն է մատնանշում,  
իսկ ինքնորոշման խաչողի-  
ներում տեղակայված բազում  
սահմանադրական արգելափա-  
կոցների բանալիները գտնու-  
վում են տվյալ հանրության  
ձեռքին: Դրադրության սթափ-  
գնահատականն էլ հուշեց այլ-  
ընտրանքի անհնարինությունը՝  
հարկավոր է ոչ թե քախել ե-  
րիցս եղծված սուս գաղափար-  
ների դոները, այլ ազգային ար-  
ժանապատվության թելադրան-  
քով ի վերջո տեր կանգնել  
բոնադատված ու մոռացության  
վիճերում զմուված ճշմարտու-  
թյուններին: Բոնադատված ու  
պատանված, քանի որ, որքան  
էլ թութակի պես կրկնենք, թե  
անհարու ասորմությունն չի կե-

տում, բայց հաճախ նա այսպես է քանդում՝ պատմության տունը, որ այլևս թնարավոր չի լինում վերականգնել:

Երկրում ծավալվող Բամբականուր զարթոնքի ալիքը Բատակորեն շուի երես Բանեց ազգային ինքնագիտակցության դրսերման երկու ընդդիմադիր քւեռներ՝ սերտորեն կապված ժողովրդի պատմականիկական զարգացման մակարդակի հետ: Օճառի պըդա շակ ն երի նման Բօդսցնեցին ազգային զարգացման կեղծ տեսությունները: Ոմանց այդ զարթոնքը Բանգեցից արյան ազգային ինքնագիտակցության, որը, արդարև, ապաշնորհության անհմասուու դաժան խոռվության փաստիներով՝ անխուսափելիորեա տանում է փակուղի: Մյուսները զորավիգ եղան ազգային ոգու ինքնագիտակցությանը, գաղափար, որը Բարյուրամյակներ առաջ են որդեգրել Բայերը:

Արցախյան շարժումը, որի գերխնդիրը տարագիր որդու Բարազատ Մոր գիրկը վերդադրձնելն է, իր Բունը Բաղթահարեց ծանր ու արյունալի սումգայիթներով, որը քաղաքական գնահատական չստանալով՝ իր ողբերգական արձագանքներն ունեցավ Ֆերգանյում, Նովի Ռուսական և այլուր: Միաժամանակ պարդարձակ, որ ժողովրդի մարմինը կարելի է սպանել, Բոգիները: Ազատագրական պայքարը միշտ էլ ցողվել է նա Բատակների սուրբ արյամքդարձել քարու և չարի, լույսու խավարի անհաջող մենամարտ:

Ինքնաբերաբար ու ճիշտ ժամանակին ծնունդ առաջարժման օրինական զավակը «Ղարաբաղ» կոմիտեն, որն սկզբանե ոչ թե մի խմբակցության պարտադրող գաղափարախոսությունը եղավ, անհանդանելի կամքի արտահայտիչը: Ո՞չ լուտանքներ ու պարսականքները, ո՞չ Բալածանքն ու բանտարկությունը, ոչինչ չսասանեցին նրան Բամոզմունքները, չխաթարեցի Բամատո առողջ գործի Բա-

թանակի նկատմամբ։ Ավելին, անցյալ տարվա փետրվարից ծայր առաջ «Էքստրեմիստական» ցույցերը, միտինգներն ու գործադրութերը, որոնք վերջերս հանքափոր գործադրութվորմերի օրինակով հարկադրված որակվեցին որպես հուսահատ ցասման ճիշ, վկայեցին կոմիտեի ու ժողովրդի միասնական ոգու անքակտելիությունը։ Զկար ջրաժան, չկար տարակարծություն, և դա հիանալի էր։

Անդարձ անցել են կեղծ կուոքերի խնկարկման ժամանակները։ Կուսակցության և ժողովրդի պատմության պատվանդամներից շառաչյունով գահընկեց են լինում ինքնակոչ սրբերն ու փշովի առաջնորդները։ Եվ, փառք աստծո, որ կոմիտեի տղաները չեն հավակնում գրավելու թափուր տեղերը։

Հայոց մեծ երկրաշարժի դժոխային պարուրակները Բաղթահարող և Արցախի դատը պաշտպանող մեր ժողովը պայքարի փորձը Բուշում է դասեր քաղել ոչ Բեռու անցյալից։ Ցավոք, կորուստներն այնքան անշափելի են, որ հարկավոր է առնվազն ևս 70 տարի՝ մեր տարեգրության վերջին շրջանի ավգյան ախոռները աղք ու աղտեղությունից մաքրելու համար։ Այդ վիթխարի ժամկետը կարելի ելքատել սուկ այն դեպքում, եթե նոր սերնդին ասվի ողջ ճշմարտությունը։ Ազգային սնապարծության մեզ անհարիր պատվաստը մերժելով վանելով ազգայնամոլության ուրվականը՝ մենք՝ պետք է դաստիարակենք ազգային արժանապատվության խոր զգացում։ Այս տեսանկյունից արցախյան շարժումը մակերես հանեց առներելի վրիպումներ։ Հայոց պատմության նավ փաստորեն հանձնված էր Բող Մակոծ ծովի տարերքին, եր մեր Բողը, նյութական ու մշակութային արժեքները իրեն Բորինվածքներում սեփականութունիաթովները, ախունդովները, մյուս ավարառուները, ըստ պառելով լոկ իրենց հասու միջոցների ողջ զինանցը, սըրս գերում և ու սպիտակ ոչխար-

Աերի կճղակների գծած քարտեզի կորսույան մորմոքը՝ վարձեցին ոռոսական հրատարակությունների ծանր հրետանին: Եվ ստի, կեղծիքի, օրը ցերեկով կատարվող թալանի միջից մեզ չի հաջողվում դուրս կորզել մեր տոհմիկ ժառանգությունը, որ էրկում-փոթորկվում է կրակի ճիրաններում: Ինչո՞ւ, որովհետև մեր ձեռքերը մերկ են, իսկ նրանք և՛ բենզին են կոտակել, և՛ լուցկի: Դեռ մետն էլ հորդորում են մեր մի հատիկ շագանակի համար չվտանգել Բարեկանների անհող քարաքուները: Այդ, մենք անպատրաստ ենք, դատապարտված կը-րելու անօգության ծանր խաչը, քանի որ տարիներ շարունակ ազգային ծրագիր չենք ունեցել: Մենք կամովին տըր-վել ենք համատարած ոռուսացման այլասիրական համաճարակին, որը սաղմնավորում էր ապազգային մտածողության ու հոգերանության բազմագլուխ հիդրան: Իսկ որտեղի էին թաքնվել ոռոսական կրթություն ստացած այդ գերտաղանդները, որոնք այնքան կիրթ են և մանավանդ լեզուներ գիտեն (բացի մայրենին), ինչո՞ւ շլսվեց նրանց ըմբռսանայնը նույն այդ կենտրոնական հրատարակությունների էջերից: Չկան, կարծես չեն ել եղել:

Անշուշտ, ազգային արժանապատվության զգացումը չի շաղկապվում սոսկ լեզվի գործոնի հետ: Գուցե թե ընտիր հայերեն են խոսել այն մասնագետները, ովքեր նույնպես թեյավճարի հոգերանությամբ խարիսում էին ժողովրդ կեցության հիմքերը՝ շահագործելով Սևանա լիճը, հանրապետությունում զարկ տալու մեծ քիմիային, կառուցապատելով ոչ երերակայուն տարածքները, փառաբանելով Հայկական ատոմակայանի Արվաճումները... Դեկտեմբերյան աղետից առաջ մենք հոգ պասպիսի մանր ու մեծ քանի քանի ցնցում ենք ապրել... Ուրեմն, խոսքը ոչ միայն լեզվի այլև ազգային ձևավորված մեկա-

բագիր ունեմազու մասին է: Այլապես, մեր Բոգևոր մշակույթի նկատմամբ այսօր իսկ ձեռնարկվող լեմկթեմուրյան արշավանքի պայմաններում մեր Վայ-Գիտականությամբ ջուր չէինք լցնի ուրիշների շրադացին: Ժողովրդական իմաստությունն ասում է՝ բաց գլխին աստված չկա, և կարկուտը խփում է ծեծած տեղը: Բայց գլխարկ կարելու փոխարեն (Այութ՝ որքան ուզես) մեր պատմագիտության այրերից ոմանք շարունակում են պնդել իրենցը:

նորյան անաղանգ, բանի որ Բնազանդվելու աստվածաշրջան քարոզը մեզ երբեք բարիք չի երեց: Քանի որ, երբ ադրբեցանցի Բետին Բովիվն ու նախըռչին մեր աշրի առաջ, Բեռնար ծրագրի թեղադրանքով բյուրեղապակու և կահուքի փոխարեն նրագեն էին զնում, մենք մեր կենսագործութեռության բոլոր արյունատար երակները անց էինք կացնում Բաքվի սրտով՝ երբեք շմտածելով, որ ինքներս մեզ ակամա նետում ենք շրջափակման ծողակը:

Եթե մենք տեր չենք կանգնում նոյսան առասպելին, ուրեմն, տարաբախտ նոյը ծագումով ադրբեջանցի է, եթե Հայկական քարձրավանդակում հայերն ու հայոց լեզուն եկվոր են, ուրեմն, Ռուսա անունով ոուս թագավորը ոուսական գերիշխանություն է հաստատել դեռևս Ուրարտուում, եթե մեր մշակույթը լուսադն զիջում ենք մարտնչող վաչկատուն ցեղերին, ուրեմն, իրոք, մեր երկիրը աղվանական է... Իսկ գուցե հայեր ընդհանրապես չեն եղել, և Հայաստան անունն է Ադրբեջան -քաղի տարընթերցումն է: Այսպես կողոպտված թափայի մեջ սեփական յուղով տապակվելով՝ տեսեք, թե ուր հասանք: Այսպես երբեք են չենք մշակի ազգային հիմնավոր ծրագիր, և դեռ հայոց Բամազարի հարժու շարժումն է կխեղդենք Բենց քարուրում: Ազգային հարցը հարուցում և լուծում է ոչ կենտկոմի արտահերթ պլենումը, ոչ Գերագույն խորհրդի հերթական նատաշրջանը, այն մեկընդմիշտ ու անդառնապիրեն աղթնացրել, շարժման մեջ է դրել ժողովուրդն ինքը: Ըստ Էության ժողովուրդն էլ վճռել է Բարցն իր համար՝ անկախ այն քանից, թե երբ և ինչպես կվավերացվի պաշտոնական ատյանների կողմից: Եվ օրվա նրամայականը դառնում է միասնության ու սեղմված բոռնցը Արցախյան շարժման հայելու մեջ արտացոլվում է մեր դանդաղ, բայց հաստատուն առաջընթացը: Այս կտրվածքով ազգային դրոշի ու պետականության ընդունումը լոկ խորհրդանիշ չեր, և ոչ ել գոյապահանական տեղաշրժերն են զուտ տնտեսական ձեռքբերումներ. մենք աստիճանաբար մշակում ենք ազգային արժանապատիվ կեցվածք: Նոր մտածողության արգասիք են ոչ պաշտոնական կազմակերպություններն ու միավորումները, որոնք խոստանում են արդյունավետ գործունեության լայն հեռանկար: Հանրապետության որոշ շրջաններում տեղի են ուժենում իսկական դեմոկրատական ընտրություններ, աշխատավորությունն ինքն է առաջադրում իր տըմտեսական ու քաղաքական առաջնորդներին: Այս ավանդութը, տակայն, պետք է արմատավորվի խոհեմորթն, առանց հապճեապ որոշումների ու կադրային հախուտն ջարդի: Զըմոռանանք, թե ինչ անշտկելի սխաղներ գործեցինք, երբ հեղափոխական կրքով բռնկված՝ ժողովրդական զանգվածները քանդում էին Բին աշխարհը՝ նորը կառուցելու իրենց հավատով: Մխալվելու իրավունք մեզ չի տրված, ամեն նոր սխալ նրում է դեպի... Ուրեմն, ազգային խորհրդարանի առաջիկա ընտ

Դառնալու կարգախոսը:  
Այս առումով արցախան  
շարժման նախօրինակը պետք  
է փնտրել մեր ազգային շար-  
ժումների լուսավոր էջերում,  
բռնակալության ստրկական  
կապահպանոր խորտակող նե-  
րություններում որևէ վրիպու  
այլևս չի ներվի: Մերձբալթյան  
հանրապետությունների փորձը  
թելադրում է ժողովրդի ու նրա  
քաղաքական դեկավարության  
միասնական հայացքի բաղա-  
լի մնարավորությունը:

բումերի սխրանքի մեջ։ Երբ ժողովրդի գոյատևումն ապահովելու «խաղաղ» միջոցներն սպառվեցին, նրանք դիմեցին անձնուրաց քայլի՝ զենքը ձեռքին ճահանուակվել՝ հանուն ազատության։ Սա բնակ զինված պայքարի կոչ չէ, այլ զգո-

Հայ ժողովրդի ճակառագրի այս դրամատիկ պահին վերակառուցումը պետք է տարվի նորակառուցման հունով, որպես ազգային ոգեղեն ինքնագիտակցության նոր սկիզբ։